ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

08 մայիսի 2026 թվականի թիվ 52-Ա

ք.Երևան

«ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի ապրիլի 06-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 11 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ, այն է՝ «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից իր 2025 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2026 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չներկայացնելը:

2026 թվականի մարտի 02-ին Հանձնաժողովը Հեռարձակողների և ցանցային օպերատորների ղեկավարներին է հասցեագրել թիվ Ե/04/04.1/166-26 գրությունը Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտության մասին:

Հեռարձակողը նշված գրության վերաբերյալ որևէ պատասխան չի ներկայացրել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի ապրիլի 06-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 11 վարչական վարույթը և 2026 թվականի ապրիլի 07-ի թիվ Ե/04/04.1/251-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին՝ հայտնելով, որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները:

Հեռարձակողը 08.04.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել բացատրություն, ըստ որի՝ 2022 թվականից գործունեություն չի իրականացնում և կցել է Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ) 27.06.2022թ. ներկայացված «Հարկ վճարողի գործունեությունը որևէ օրվանից անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու և գործունեությունը վերսկսելու մասին» 30.06.2022 թվականից անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարությունը և դրա ծանուցումը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝

1) տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) հեղինակազորում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2020 թվականի օգոստոսի 07-ից սկսած, յուրաքանչյուր տարի Հանձնաժողովը հեռարձակողներին պաշտոնապես տեղեկացնում է Օրենքի վերոնշյալ պահանջի կատարման մասին, չնայած նրան, որ ոչ Սահմանադրությամբ և ոչ էլ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ Հանձնաժողովն օրենսդրական պարտավորություն չունի:

Հատկանշական է, որ Հեռարձակողը 2021 թվականի հունիսի 11-ից հանդիսացել է Հանձնաժողովի կողմից հեղինակազորված իրավաբանական անձ (հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 047, որոշման ամսաթիվը, համարը՝ 11.06.2021թ. թիվ 96-Ա):

Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը դադրեցվում է, եթե՝

5) այդ մասին դիմում է ներկայացվել:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերն՝ արձանագրում ենք.

Օրենքի 19-րդ հոդվածի հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հեռարձակողի նկատմամբ վարչական վարույթը հարուցվել է Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտավորության խախտման հիմքով, որը պայմանավորված է «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության՝ որպես հեղինակազորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակով:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարչական վարույթի նյութերը, այդ թվում՝ Հեռարձակողի պարզաբանումն առ այն, որ 2022 թվականից գործունեություն չի իրականացրել, և պարզել է, որ չնայած նրան, որ Հեռարձակողը նախորդ տարիների հասույթի և դրա գոյացման բացվածքի վերաբերյալ տեղեկատվության մեջ հասույթի չափը նշել է 0 (զրո) ՀՀ դրամ, սույն տեղեկատվությունը համարվել է ներկայացված՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դրութների պահանջի համաձայն:

Նշենք նաև, որ Հեռարձակողը 17.04.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել դիմում, որով խնդրել է դադարեցնել «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը Հանձնաժողովի 11.06.2021թ. տրամադրած թիվ ՀՎ № 047 հեղինակազորման վկայագրի գործողությունը:

Հանձնաժողովի 2026թ. ապրիլի 27-ին թիվ 42-Ա որոշմամբ դադարեցվել է Հեռարձակողին 2021 թվականին տրամադրված հեղինակազորումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կրկին արձանագրում ենք, որ քննարկվող վարչական վարույթի առարկան հանդիսանում է հենց «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության հեղինակազորմամբ պայմանավորված՝ Հեռարձակողի համար Օրենքով սահմանված

պարտավորությունը, տվյալ դեպքում՝ նախորդ տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը: Հեղինակազորման դադարեցման վերաբերյալ Հեռարձակողի դիմումի ներկայացման հիման վրա Հանձնաժողովի 2026թ. ապրիլի 27-ի թիվ 42-Ա որոշմամբ փաստացիորեն վերացել է այն իրավահարաբերությունը, որի շրջանակներում վարչական վարույթը հարուցվել էր:

Այսպիսով, քանի որ բացակայում է վարչական իրավախախտման փաստի կամ կազմի առկայությունը, Հանձնաժողովը եզրակացնում է, որ 2026 թվականի ապրիլի 06-ին հարուցված թիվ 11 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ վարչական վարույթը ենթակա է կարճման, եթե բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, ինչպես նաև Հանձնաժողովի 2026թ. ապրիլի 27-ի թիվ 42-Ա որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ 06.04.2026թ. հարուցված թիվ 11 վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀՈՈՒՓ ՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

08 մայիսի 2026թ.
ք. Երևան